

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

11.06.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
Տ.Բադոյանը - մարզպետի տեղակալ
Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Ա.Աղլոյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Եղիազարյանը Ա.Գասպարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
Հ.Ղամբարյան - մարզպետի խորհրդական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ձեկ.Ն.Սարգսյան/
2. ա) ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 424-Ն որոշման կատարման ընթացքի մասին
բ) SMART դասարանների ստեղծման աշխատանքների ավարտման մասին
/ Ձեկ.Լ.Ասլանյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/ Ձեկ.Հ.Պապոյան/
4. Մարզի առողջապահական ընկերությունների վճարովի ծառայությունների մուտքերը 01.06.2018թ. դրությամբ
/ Ձեկ.Ս.Լամբարյան/
5. ա) Պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպումը և անցկացումը Լոռու մարզի պետական հանրակրթական դպրոցներում
բ) 2017-2018 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների մասին
գ) «Կորյուն» ռազմամարզական խաղերի արդյունքների մասին
/ Ձեկ.Ա.Մատինյան/
6. Համայնքների կողմից պետական սուբվենցիա ստանալու համար ներկայացրած ծրագրային գործընթացի մասին
/ Ձեկ.Հ.Մկրտչյան/
7. 2018 թվականի ամառային զորակոչի մասին
/ Ձեկ.Ս.Ղուբաթյան/
- 8.Մարզի գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/ Ձեկ.Գ.Հակոբյան/
9. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանին, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Բնակչության և համայնքների կողմից բարձրացված ցանկացած խնդրի առնչությամբ կազմակերպել արագ արձագանքում, տալ օբյեկտիվություն և արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ լուսաբանում իրականացնել զանգվածային լրատվամիջոցներով:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Համայնքների կողմից սեփական եկամուտների կատարումն ապահովելու և բնակչության շրջանում առավել թափանցիկ և օբյեկտիվ աշխատելու նպատակով համապատասխան աշխատանքներ իրականացնել համայնքների ղեկավարների և համայնքի ավագանու հետ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Մարզի առողջապահական ընկերությունների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ հսկողություն սահմանել սպասարկման մակարդակի և անհատական վերաբերմունքի դրսևորման նկատմամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել պարարտանյութի և դիզվառելանյութի բաշխման գործընթացների օրինականության նկատմամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Համայնքների կողմից սուբվենցիաներ ստանալու համար ներկայացված գործընթացի առնչությամբ ծագած խնդիրների վերաբերյալ համապատասխան գրություն պատրաստել և ուղարկել Տարածքային Կառավարման և Զարգացման նախարարություն:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/